

ՄՐՑՈՒՅԹ

HPE ապրանքանիշի սարքավորումների սպասարկման ծառայություն ձեռք բերելու

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է HPE ապրանքանիշի սարքավորումների սպասարկման ծառայություն ձեռք բերելու բաց մրցույթ, երեք լոտով՝

Լոտ 1 - HPE Storage, 1 տարի

Լոտ 2 - HPE Servers, 1 տարի

Լոտ 3 - SAN Switch, 3 տարի:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները, որոնք պետք է ներկայացնեն արտադրողի կողմից տվյալ մատակարարումն իրականացնելու համար հավաստագրում ստանալու վերաբերյալ փաստաթուղթ (Manufacturer Authorization Form), մրցույթի անցկացման և մատակարարման իրականացման ամբողջ ժամանակահատվածի համար:

Մատակարար կազմակերպությունը պետք է՝

- հանդիսանա Silver, Gold կամ Platinum մակարդակի HPE գործընկեր ՀՀ տարածքում,
- ունենա առնվազն որակավորված աշխատակից/ներ HPE Master ASE Server Solution Architect,
- ունենա որակավորված աշխատակից/ներ HPE Master ASE Storage Solution Architect:

Մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները՝

- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մրցույթի մասնակիցները յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացնեն առաջարկ փակ ծրարով՝ հիմք ընդունելով սույն հայտարարության կից Հավելված 1-ում ներկայացված նկարագիրը:

Մրցութային առաջարկը յուրաքանչյուր լոտի համար պարտադիր պետք է պարունակի՝

- Մրցույթի առարկայի անվանումը,
- գինը՝ ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
- վճարման պայմանները
- մատակարարման ժամկետները
- Տեղեկանք հարկային մարմնի կողմից, հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող առաջարկի գործողության ժամկետը վավեր պետք է լինի առաջարկների ուղարկման օրվանից սկսած 15 օրից ոչ պակաս:

Լոտերի տեխնիկական նկարագրերի նվազագույն պահանջները կտրամադրվեն մրցույթի մասնակից կազմակերպությանը՝ տեղեկատվության գաղտնիության պայմանագիր ստորագրելուց հետո, որի համար մասնակիցը համապատասխան գրություն պետք է ուղղի arca@arca.am էլ. հասցեին:

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկները ամփոփելը ցանկացած պահի դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից՝ առանց որևէ պարգաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկները ներկայացնել ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք) հասցեով:

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն 18.03.2024թ.-ը ներառյալ, ժամը 17.00-ն: